ԱՅԼ ԵՒ ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ ԾՈՎԱԽՏԷ
ZOTOS ZOTOS ZOTOS
ՍՔԱՆՉԵԼԻ ԳՈՒՐՄԱՆ ՄԸ
Ամեն դեղարանների մէջ վաճառքի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐՀԱՆ	*Ձերմակ ու Սեւ*	533
Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ	*Մ՚Ի, Դարմհնիհ՝...*	534
Յ. ԴԱՆՃԱՆՃԵԱՆ	*Բերախանախան Խնդիրներ*	535
Գ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ	*Թէ Ինչո՞ւ Ստեփն. Մազերը Թիեցն.*	543
Կ. ՆԱԻԱՍԱՐԴ	*Միտնաք Փաշա*	546
ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԼՐ	*Դեղ. Հանդես մը Փոսալիտեանի Մէջ*	554
ԽՄԲ.	*Եօրնեկի Լուրեր*	556

☞ Քանի մը օրէն
Հրապարակ կ՚ելլէ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆԻ ☜

ՍԵՒ ԼԵՌԻՆ ՄԱՐԴԸ

Ամբողջ գործը* 384 *էջերով

Գին.— *Իզմիրի համար* 7 Ղրուշ
Դաւառ. » 8 » *կամ* Ֆր. 1.75

Առանց փոխարժէքը դրկելու եղած չանձնարարութիւնի ենթակայ չեն ստանուիր: Մեծաքանակ գնողներու 20 % զեղչ: 10 օրինակ գնողներու 11 հատ կ՚դրկուի.

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ

Ս.-ՏԵՏՐ՝ Դրուագներ Ապտ-իւլ-Համիտի բռնապետական բէժիմէն. *Հեղինակ* ԲՕԼ ՖԷՇ, *Թարգմ.* Կ. ՆԱԻԱՍԱՐԴ. — *Դին* 2 Ղրշ.:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ "Ա. ՄԱՄԼՈՅ"

ՏԱՐԵԿԱՆ	50 ղրշ.	12 Ֆր.
ՎԵՑԱՄՄԵԱՅ	25 »	6 »
	ՀԱՏԸ 40 *փարա*	

Հասցէ՝

م. ماموريان مخـدومى — ازمير

« آروليان ماموليان غزه‌سى صاحب امتياز ومدير مسئولى »

M. Mamourian Fils — Smyrne



Médaille d'Or de l'Exposition d'Athènes 1903

ՀՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ ՁՈՒԱՆ ԱՌԹԻՒ ԷՖԷԼԷՐ

ցոյցադրած է կանանց հա-մար, գոյնզգոյն, պլանգիան ու ճաշակաւոր հովանոցներու հիանալի զանազանութիւն մը, հովանոցներ՝ որոնց շքեղութիւնը ու կատարելութիւնը **ԿԸ ԳԵՐԱԶԱՆՑՆ** *նոյն իսկ* **ԵՒՐՈՊԻՈՅ ՄԷՋ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ։**

☞ ՆԿԷՔ ԱՆԳԱՄ ՄԸ ՏԵՍՆԵԼՈՒ

ու վստահ եղիք թէ նոյն իսկ ձեր ամենէն զժուարահաճները պիտի գոհանան ամէն տեսակ կէտերով, — Նրբութիւն, Նորութիւն, Ազնուութիւն, **ԵՒ ԱՅԼՆ**

Ժօտ պիտի գտնէք նոյնպէս, Հովահարներ որոնք գեռ վերջերս սուացած է, Պայուսակներ, Հեքսպիտակներ, Զեռքի կոզոլներ, Գաւազաններ, զարդարանքի առարկաներ ևն. ևն.

Գաւառի գնողներուն համար ☞ **„ԷՖԷԼԷՐ"ին հասցէն՝**

ՅԱԿՈԲ ՊՈՍԹԱՆՃԵԱՆ

Շիշլիճիւէր փողոց — Ի. Զ. Մ Ի.

ՕՄԷԿԱ

ՏԻԵԶԵՐԱԶՈՉԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ

ՆԻՒՅՈՐՔԻ ԱՄԵՆԷՆ ԿԱՐԵՒՈՐԸ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1848ԻՆ

ՕՄԷԿԱ ՈՍԿԻ, ԱՐԾԱԹ, ՆԻՔԷԼ ՊՈՂՊԱՏ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

ՕՄԷԿԱ *Մեծագոյն մրցանակ 1900ի Բարիզի ցուցահանդէսէն։*

ՕՄԷԿԱ.— *Այս ժամացոյցերու յատկութիւններն են՝ ճշդապահութիւն, տոկունութիւն և նորոգութեան պէտքին միջոցներ։*

ՕՄԷԿԱ *Դիւրամատչելի դիներով ծախուած ժամացոյցերու ամենէն սքանչելիներն են։*

ՕՄԷԿԱ *Ամէն մարդու գրպանին մէջ գտնուելիք միակ ժամացոյցն է այս։* **ՕՄԷԿԱ**

Ընտրելի, անբաղդատելի միակ ժամացոյցներն են ասոնք։

Դիսել առ միակ ներկայացուցիչն՝

ԱՐՄԵՆԱԿԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Ջուխա-Պէզէարէն Թիւ 2 — Իզմիր

Միեւնոյն վաճառատան մէջ կը գտնուին նաեւ մեծ մրերէ մը ուրիշ ամէն տեսակ ժամացոյցներու պատից եւ կիներու համար՝ շղթաներ, գոտարեղէններ, ինչպէս նաեւ ժամագործներու եւ ոսկերիչներու յատուկ ամէն տեսակ գործիքներ։

Ցանձնարարութիւնք փութով եւ պատուաւոր կերպով կը կատարուին։

ՆՈՐԹՔԷՔՔԹ

(NORTHERN)

ՀՐԴԵՀԻՔԵԻ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Իզմիրի Գործակալութիւնն հաստատուած 1864էն ի վեր

Դրամագլուխ Ընկերութեան	Լ. Ս.	3,000,000
Տարեկան հասոյթ	» »	1,600,000
Պահեստի գումար	» »	6,673,000

Ընկերութիւնս նպաստաւոր պայմաններով կապահովագրէ անշարժ կալուածներ, գործարաններ, ամէն տեսակ ապրանքներ եւն. եւն.։

Տեղեկութեանց համար կրնայ դիմել առ

ՃԷՅՄՍՇԱԹԳԷՆՍՕՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԻԶՄԻՐԻ ԵՒ ՓՈՔՐ ԱՍԻՈՑ

Ֆրանկաց քաղ, Բասած Սթուրցուճկեր

NATIONAL UNION SOCIETY LTD.

ՈՐՈՒ՝ ԳՈՐԾԸ ՓՈԽԱՆՑՈՒԱԾ ՈՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԱԾ Է

PHOENIX ASSURANCE COMP. LTD. Է

ԼՈՆՏՈՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1782ԹՒՆ

	Անգլ. Ոսկի.
ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ	4,500,000
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՒՈՒԹ	1,500,000
ՄԻՆՉԵՒ ԱՑՍՕՐ ՎՃԱՐՈՒԱԾ ՎՆԱՍՆԵՐՈՒ ՓՈԽԱՐԻՆԸ ԱՒԵԼԻ ՔԱՆ	30,000,000

Հաւուրաձանօր ասպ ընկերութիւնը 1893ին միակ POLICE *մը ստորագրեց 3,474,030 անգլ. ոսկիի հասեալ եւ իր ապահովագիրն ստացող Անգլ. ոսկի 33,821. ինչ որ միակ* POLICE*ով մը կնիքուած ապահովագրութիւններու մէջ անհախընթաց պարագայ մըն է։*

Ասոր ընկերութիւնը ՀՐԴԵՀԻ ԴԷՄ *կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնքեր, ապրանքի, կարասիի եւն. ննպաստաւոր պայմաններով։*

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԻԶՄԻՐԻ

Լ. եւ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ԻՆԻՕՆ ԵՒ ՖԷՆԻՔՍ ԷՄԲԱՆԵՈՒ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ, ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ

ԹԱՂԱՒՔ 69 ԹՈՒ

Rue de l'Arcade.

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

1864ԻՆ

Դրամագլուխ, պահեստի կապուածներ առիթի համ 80,000,000

ՆՊԱՏԱԿՔԻ ՃԻՒՂ.— *Եւ ոչ մէկ ընկերութիւն Ինիոն և Ֆէնիքս Էմբանեոլ Ընկերութեան չափ առաւելութիւններ կրնայ տալ։ Արժեւոր իր ապահովութեան արտադրելի գումարը* (garantie) *ապահովագրեալներու դրամագլխին համեմատութեամբ հարիւրին դէմ 280 առաւելութիւն ունի, և մէկ իր տակերու ժամանութեան դէմ և ոչ մէկ ընկերութիւն կրնայ մրցիլ։ Տրուած տարեկան շահաբաժիններէն կանխիկ են ու առանձին տարիէն կը վճարուին։ Ու ամենէն առելին կայ, մարդ Ինիոն և Ֆէնիքսի Էմբանեոլ Ընկերութեան ապահովագրութեամբ կրկին անգամ ապահովագրուած կ'ըլլայ, որովհետև պայմանաժամին և կամ մահուան պարագային ապահովագրուած գումարը ստացուելէ ետք Ընկերութիւնը բացի* avenant *մըն ալ կուտայ օրուն ոյժովը (և այս առանձին ապահովագրութեան վճարելու) արկած մը պատահած ատեն՝ բացի վճարուելիք կեանքի ապահովագրութենէն Ինիոն Ֆէնիքսի Էմբանեոլ կը վճարէ համաչափ կամ կէս և կամ մէկ հինգերորդ գումար մըն ալ բացէն (արկածին կարևորութեան չափով)։*

Աւելի տեղեկութեանց համար դիմել Ընդհանուր գործակալութեան գրասենեակները, Իզմիր Շեքճիլէր Աւստրիական նոմականի վրայ։

ՏԻՐԱՆ ԳԱՄՊԱՐԵԱՆ

ESTABLISHED 1782

PHŒNIX ASSURANCE COMPANY L^D OF LONDON

Գրամադրուած և ապահեստի դրամ **Ա. Ո. 4,500,000** *Տարեկան հասոյթ* **Ա. Ո. 1,500,000**

«**ՖԷՆԻՔՍ**» *122 տարիէ ի վեր հիմնուած սոսկ հրդեհի ապահովագրութեան Ընկերութիւն մ'է և ցարդ հատուցած է առաւել քան* **27,000,000 Ա. Ո.** *վնասուց համար։*

«**ՖԷՆԻՔՍ**» *կ'ապահովագրէ հրդեհի դէմ շէնք, կարասիք և ապրանք յոյժ նպաստաւոր պայմաններով, Գիմել առ*

Լիազօր Ընդհ. Գործակալ Իզմիրի և Գաւառաց

F. BLACKLER

ROYAL EXCHANGE ASSURANCE BRANCHE-MARITIM

ETABLE A LONDRES

ԵՒ 1720

Ծովային Ապահովագրական Ընկ. խիստ նպաստաւոր պայմաններով։ Մասնաւոր պայմանագրութեամբ մը ընկերութիւնս կապահովագրէ նաև կրակի արկածներ, 10 օրուան պայմանաժամով մը Էթերանոցներու (Docks) *մէջ ինչպէս յԱնգլիա նոյնպէս և գլխաւոր ծովեզրու մէջ ինչպէս Մարսէյլի, Հավրի, Համպուրկի են. ևն.։*

Իզմիրի Ներկայացուցիչ

F. BLACKLER

ԱՉՔԱՏԵՑԻՔ ԱՀՍ ՄԱՆՈՒԿԸ

Ինչո՞ւ համար այսպէս բողոքել ձեր սիրեցեալ մանկիկը ահ ինչի ու հապի, ու թերեւս մեռնի, միշտ ձեռ. ամեր մօրն ձկան իւղով, կիրի եւ ստացի ՅԻՓՈՎ պատրաստուած

ԷՄՈՒԼՍԻՕՆ ԱՒՕՐԸ

տալով, զանճ պիտի կրնամ տեսնել առողջ ու բարեկազմ, գուարթ ու զեղուկամ։ Արդարեւ այսօր հանգարտաբար պիպեհցեր, ճաշատուղջ եւ երջանիկ եմ, վասնզի պարզապես ղրկուցի Չկնոր. սր մարքայովանոցց մայրերը, խոհեմ եւ որ Էմիւլսիօն Սկօթին յատուկիմաստուն, ի դեպ ժամանակին ամենց տուած եմ Էմիւլսիօն Սկօթ։

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԱՆՈՐ ՈՐԿՐԱՄՈՒԼԸ ԴԱՐՁԱԾ ԵՆ

Կը ծախուի բոլոր դեղարանները եւ բոլոր դեղի մթերանոցները։



5 ՄԱՅԻՍ 1909 — ԹԻՒ 19

ՁԵՐՄԱԿ ՈՒ ՍԵԻ

Օամանցի ենք . . .

Ինչ սիրան դիւտ, ինչ գեղեցիկ բացատրութիւն և ինչ կայ ուելի տահմանապրական այս երկու բառերէն դուրս։

Բայց Օամանցի ենք՝ երբ իրարու պատիւներ կ'ընենք, Օամանցի ենք՝ երբ պիրար կ'համբուրենք, Օամանցի ենք՝ երբ տահմանադրութիւնը վտանգի տակ է, Օամանցի ենք՝ երբ հայրենիքին կ'ըսպառնան արտաքին թշնամիներ, Օամանցի ենք՝ երբ պատմ կուտանք վարուան, Օամանցի ենք՝ ինչ դիտնամ, երբոր պէտք ուն եղնան մեզմէ, բայց Օամանցի ըլլալէ կ'դադրինք, երբ մեր իրաւանքները պաշտպանելու վրայ է խնդիրը, Օամանցի չենք՝ երբ պլոխա չենք ձգեր ամեն բանի առջև, չենք՝ երբ մտոլ չենք ուզեր տալ որ մեզի կեղեքեն, չենք՝ երբ արդարութիւն կ'պահանջենք, չենք՝ երբ հաւատարութիւն կ'պատանք, չենք՝ երբ պրամ տալ չենք ուզեր, չենք՝ երբ գիւղապրուելու խնդիր կ'հանենք, վերջապէս ա՛չ միայն Օամանցի չենք այլ կեանքի ենք երբ վիպերնս չենք երկարեր, որպէս զի առանց յապնելու զայն իր բուն էն անջատեն այս երկրին բուն իսկ Օամանցիները։

Ինչ սիրան ներդաշնակութիւն, չէ՞ նե որքա՜ն միամտութիւն մեր կողմէ, առարկութիւն պէտք չէ։ Այս է բուն իսկ ճշմարտութիւնը, չօշափելի ապացոյցներու պէտք կա՞յ, տնա ձեզի աչքեն վերջինն կպկպկայ անգիլի տղէրը։

Մուհամէտ Եղի՝ կ'ցաւի, Հիւսեյին Հիլմի փաշա հրամաններ կ'արձակէ, Ջէմիլ փաշա՝ հրահանգներ կ'ծրագրէ, Մահմուտ Շեֆիքէթ փաշա՝ պատերազմական տեսան կ'պրկէ, Անվէր Բէյ՝ ոտքանոք կ'խոսէ, Աբդուլահի Արթոյանի չիզիրը տոքի և-

լած են, Չէրազ՝ վիպասանաուհիները կ'վայէ, Գաբաեան՝ նախաբաններու կ'այցելէ, Շահրիկեան իր անվերջանալի բանաձևերուն վրայ հիացնել կուտայ Ազգ. Ժողով կոչուած ոչխարներու փարախը, բայց խնդիրը քալլ մ'անգամ առած չէ, Առանայի ժողովուրդը, — ինչ որ մնացած է լնակառաքար, — հայ կ'ապազակէ, լնակառանի պէտք ունի, դեղ ու դարմանի կարօտ է։

Յանձնաժողովները կազմուեցան, վարկերը քուէարկուեցան, հեռագիրները կ'քաշուին, ինչո՞ւ անհամբերութիւն կ'ցուցնէ առ Առանային, ամենէ մեծ գործն իրեն պէտք եղած վարկերու քուէարկութիւնն էր, գրկուած է գրամ, ուսուցչ, դեղ՝ երբորդականը, չորրորդական խնդիրներ են, մեղ հասկնալին...

Միթէ Օսմանցի չի՞նք...

ՆՈՒՐՀԱՆ

ԱՀ, ԳԱՐՄԷՆԻՆ ...

Ահ, Գարմենին երգը դարձեալ այս գիշեր
Ականջներուս մէջ անդադար կը թրթռայ.
Բնա՛ւ ուրիշ կայտռող երգ մը չեմ յիշեր,
Որ գիս այսման հետապրնդէ անխընայ:

Կը կսմաւէ միտքս մէջ կի՛նը յայրաս,
Յանկապարար ու հեշտախտիկ ժեստերով,
Բամբիռներու շրշկոցին մէջ զուարթ,
Իր ապրեռուն կորոիւնը ցոյց տալով:

Եւ ոտքերուն շարժուն մեղկ, ներդաշնակ,
Պոռնկացող նպատածիլ հետ խօսգին
Կը գրգռեն կիրքին խանդը շարունակ.

Սիրախաժեհ անյագ, անկուշտ Գարմենին
Հաճոյքներու կապրատօնն է այս գիշեր.
Ահ, այդ երգին պես պագշոտ երգ չեմ յիշեր:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Առեւ. Մամուլի Գ. Ընտմէսյին մէջ Ս. Ամատեան էֆ. ընդարձակ մատենախօսական մը ունէր մեր հրատարակած Արդի Հայերէնի Նոր Քերականութեան մասին։ Շնորհակալութիւնս յայտնելէ յառաջ յարգելի բարեկամիս Ամատեան էֆ.ի այն ընդհանրապէս համակիր լեզուին և գնահատական ուղղութեան համար որով մատնանիշ կ'ընէ մեր Քերականութեան կարգ մը նորամուծութիւններն ու ստուգութիւնները, հարկ կը համարիմ միեւնոյն առիթ քանի մը բացատրութիւններ տալ իր ինչ ինչ դիտողութիւններուն իբր պատասխան։

Ամատեան էֆ. նախ նկատել կ'ուզէ մեր յառաջաբանը ուր կը կարծէ նշմարել այլամերժ ոգի մը հանդէպ նախորդ և նախընթաց քերականութիւններու որոնց մասին անյողպակի կերպով ինչ ինչ ակնարկութիւններ ըրած էինք։ Կ'ապահովցնենք մեր պատուարժան մատենախօսը թէ մեր գրածներուն մէջ մտածուած այլամերժ դիտում մը դոյութիւն չունի երբեք, բայց ինք չընդունիր արդեօք թէ մեզի նախորդող քերականութիւններէն նոյն իսկ ամէնէն «օպտաչատ»ը կերթ ուշադ չէ թերութիւնէ ... Մեր համոզումն այն է թէ կատարելապէս անթերի գործ չի կրնար ըլլալ, բայց երբ մէկ մը իր նախորդներուն վրայ որոշ առաւելութիւններ և զգալի յառաջդիմութիւն կը ներկայացնէ, ասով իսկ ինքզինք և իր դոյութիւնը կ'արդարացնէ։ Այս տեսակէտով մեր նախորդներուն մէջ կան որ անշուշտ դոյութեան իրաւունք մը արդարացուցած և նոյն իսկ օգտակար ուշած են իրենց ատենին, բայց այսիկա չհատացուցաներ թէ անթերի էին։ Մեր յառաջաբանի մասին Ամատեան էֆ.ի դիտողութիւններուն այսչափ մը միայն պատասխանելով, զանց կ'ընենք աւելի մանրամասնութիւններու և բացատրութիւններու մտնել որ միշ չատ հետաքրքրը պիտի ատնէր և կ'անդրնինք բուն իսկ քերականութեան մասին իր դիտողութիւններուն որոնք 12 կէտերէ կը բաղկանան։

Յարգելի մատենախօսը խղճամտօրէն, նոյն իսկ նրբանկիր ուշադրութեամբ աչքէ անցուցեր է մեր քերականութիւնը և իր դիտողութիւնները կը ներկայացնէ բաղդատելին բարեացակամօրէն, նպատակ ունենալով մեր դասագիրքը «իր նոր տպագրութեանց միջոցին համ անոր յաջորդ դասընթացքներուն աւելի անթերի վի-

ճակի մէջ տեսնելու»։ Մենք ջերմապատում ենք այսպիսի դիտողութիւններ յօժարութեամբ կարդալու և անոնցմէ օգտուելու, հետեւաբար չնորհակալութիւն յայտնելով հանդերձ Ամատեան էֆ. այս բարեացակամ աշխատութեան, պէտք կը տեսնենք սակայն իր դիտողութիւններուն մասին ասել կարգ մը անհրաժեշտ բացատրութիւններ այն կարգով՝ ինչ կարգով որ ինք ներկայացուցած է զանոնք։

Ա.— Ամատեան էֆ. հրահանգներուն մէջ տեղ տեղ կը կարծէ տակաւին տեսնել դիտարարած հոլովումներ և բառեր որոնք սկըզբունքով վտարուած են գիրքէն։ Պատճառ մը չունինք սակայն մերժելու այդ յիշուածներէն ի՛զօսանութ,[*] մարդոց, տղոց, սիրոյ, ոչ ոք, ինչ ձևերը որոնք աշխարհաբարի մէջ ընդհանուր դործածութիւն ունին, ինչպէս Ամատեան էֆ. ալ կը վկայէ, և այդ ձևերն արդէն ընդունուած են մեր Քերականութեան հրատարակելի Միջին դասընթացքին մէջ։ Գալով ինչ ձևին Աղիսապանն է որ դործածած է զայն և նմանները իր թարգմանած սուրասանդեի առաջնաւորներուն մէջ ուր կան դեռ ուրիշ ինչ ինչ ձևեր ալ որ կը հատկանեն մեր Քերականութեան սկզբունքներուն։ Անցդեմի ըսինք թէ Ալմաստեանի քանի մը թարգմանութիւնները որ մեր Քերականութեան մէջ վկայուած են, կանխաւ մեր կողմէ տեսնուած չէին, որով կրցած չենք հարկ եղած retouche՚ն ընել լեզուի միօրինակութիւնը պահելու համար։

Բ.— Ամատեան էֆ. մէջ կը լսէ մխիթարեան բառը տարբեր ձևով և ուղղագրութեամբ գործածելու քանի մը պատրաստութիւն, ինչ որ հակառակ կը նկատէ մեր նախասիրած ճշտութեան պատճառին, առանց խորհելու թէ առանցմէ չատերը կրնան ստուգաբանական տեսակէտով ալ ընդունելի ըլլալ տրեխի վրիպակներ դժբախտաբար սպրդած են մեր Քերականութեան մէջ այն պատճառաւ որ չկրցանք անձամբ հսկել տպագրութեան կ. Պոլիսէն հեռու գտնուելով։ Յիշուած բառերէն տրամ կ՚ընդունինք իբրև առնականի յատկանիշ, իր հոլովական ձևերով միասին, իսկ ո՛չ տրամներով (փոխառնակ տրամներով) որ գրաչարեան վրիպակ է։ Կ՚ուզեինք, չ՚ուզեինք և չարակից ձևերը կ՚ընդունինք իբրև պահպանուած բայ որ կը լսուի ուզեցող, իսկ կ՚ուզեանը կը մերժինք, որովհետև անկարելի է ուզենալ ո՛չ թէ ուզել (ինչպէս ոչով կուտայ ուզեցայ կատարեալը)[**]։ Մենք միշտ

[*] Ուր, ուր վերջաւորող միայն քանի մը բայերու (հեղուլ, զեղուլ, երդնուլ, զբօսնուլ են.) առնականի ներկայի, անկատարի, ապառնիի, առդրադառնականի ձևերը միայն գործածական են աշխարհաբարի մէջ։

[**] Գրաբարի կարգ մը գրչնկերու յատուկ ընդհանրացած անկանոնութիւններ են նաև կը տեսնեմ, կ՚ելլամ, կը մտնեմ, կ՚իջնեմ և առանց յատկիչ ձևերը (փոխանակ կը տեսնեմ, կ՚ելլեմ, կ՚իջնեմ են.) որովհետև այս բայերուն անե-

ցատկը (=ցայտ+ատ+կ) f ով, ձիշտը՝ s ով կ'ուղղագրենք, կ ով՝ ցատկել և դ ով՝ ձիշտ ապուռածներըը պրաչարի մարիմբեր են [*], ձիշտը մէկ չատեր դ ով կը գրեն բայց s ով ուղղագրութիւնը ինծի աւելի ուղիղ կը թուի, որովհետև գիտելի է թէ հայերէնի մէջ շէն միշտ կը յաջորդէ s, ինչպէս ցայց կատան վիշտ, հեշտ, կուշտ, երաշտ, կոշտ, հաշտ, միշտ, երամիշտ են. բառերը՝ —Ճեպիկել և շտկել երկուքն ալ անթատեր կը գործածուին և սխալ չեն, երկրորդին ըլլալով առաջինին սկեալը՝ համաձայն ի, ու ձայնաւորներու ջնջման օրէնքին: Եզեր յոգնակին ընդունելով հանդերձ՝ եզերն ալ չենք մերժեր, արդէն այս վերջինը գործածողներ ալ պակաս չեն և մենք կը վախցինք որ չխափանուի անոր գործածութիւնը որ ընդհանրանալով կրնայ օր մը քանի մը միամանկ բառերու յատկանիկի երեւութացէս բացատրի ձև մը ջնջել ալխատասարի ժէջէն: —Ցղուար, ղեզուղ և ուռ երկրաբրառաւ պարտնակող համանօրինակ բառերու մէջ առաջին ո ն ջնջելով ապուր, ղեզուղ գրպնելուն կռահակից ենք, բան մը որ ո երու տպիղ կրկնութիւնն մը առաջքը կ'առնէ առանց լեզուի օրէնքներու դէմ մեզանչելու: Յառաջադիմութիւնը աւելի առաջ գնացած են այս մասին, վ ի համարժէք բոլոր ու երը վերածելով ւ ի. (օրինակ՝ հաշւի, մշակւած, համաձայնւել են:) —Մենք միշտ կը գրենք չկայ, ի ով չիկայ անկանոն է և ուր որ ի ով առուած է (երկու անգ միասին) գրաչարի գործ է:

Գ.— Մատենախօս լեզենան մեր Քերականութեան մէջ ինչ ինչ անճիշտ բացատրութիւններ և ոճի անհարթութիւններ ալ կը կարծէ նշմարել, բայց ինչպէս պատուած են անշուշտ ուշիմ ընթերցողներ.

բնոյթի ձևերն են անանիլ, եղեր, մանիլ, իջնել են: Սխալ է նաև կրնալ բային կատարեալը կրցի որ կ'երևի Թէ գրաբար կարացի՛ն միացած է և զոր ունենք դեռ կը շարունակեն գործածել. կանոնաւոր ձևն է կրցայ, ինչպես կնեցալ - կիցայ, բաղեցալ - բաղցայ են: Այսօրինակ անկանոն ձև մըն է նոյնպես բնդունեցի՛ն (փոխանակ կանոնաւոր բնդունեցայինն) որուն դէմ իրաւամբ առարկած է Ամատեան էֆէնտի,

[*] Մեր պատուական գրաչար բարեկամները շատ անգամ պատճառ կ'ըլլան ճեղինակներուն և յօդուածագիրներուն իզուր քննադատուելուն. օրինակի համար, պարակերենք փոխառեալ բանիս բառը՝ իրրև առաւարտմունքինը պարակերէն ՀՀ ին, պարտի ուղղագրուիլ նաև ով և այս մասին շատ անգամ գրուած է ու ես իսկ քննադատած եմ դպ ով բառդ գրողները, բայց եկո՛ւ տես որ մեր գիտցող գրաչարները շատ անգամ իմ բանիտերս կը խեղամխրեն և կը շարեն դպ ով (իրրև բաղդ)ի: Բաղդին նման շատ անգամ խնդիր եղած է նաև ուղղագրութիւնը բանիկ բային զոր շատերը բաղխել կը գրեն: Ձեզի կարծեր որ Ամատեան էֆ. ալ կամաց այս սխալը գործած ըլլայ, բայց եկո՛ւ տես որ իր մատենախօսականներն մէջ կը նամակիները նոյն անճիշտ ուղղագրութեան (Գ. Եռամսեայ էջ 317), ինչպես կրկնուած կը տեսնենք զանց ընելի տեղ զանց առնելի սխալը (տես էջ 348) որուն դէմ իր իսկ բողոքած էր ժամանակին (Արև. Մատուռ, 1906, էջ 536):

բը, այս մասին իր ըսած դիտողութիւններէն չատերը անտեղի նըշանդրութիւններ են, չըսելու համար խնդրանքներ, անկարօտ պատասխանի։ Չեմ կարծեր թէ անհարկ կամ անհիլա ըլլան դուն ըզքեզ դրուելդ, գեշտրիւն գործդ, գեշ քերութիւն, ակռան կը խածնե քացտութիւններըդ։ «Ակռային պաշտօնը խածնել չէ այլ ծամել» կ'ըսէ Ամատան էֆ. մենք ալ կ'ըսենք թէ ո՛չ միայն ծամել է, այլ նաև խածնել։ Ամատան էֆ. կը վախնայի որ գրէինք թէ «ան կը ցուցնէ խօսողը, դուն կը ցուցնէ մտիկ ընողը». բայց այս քացտարութիւնը ճիշտ կ'ըլա՞ր. դուն մտիկ ընո՞ղը կը ցուցնէ թէ անոր կ'ուղղուի խօսքը։ Մեր առջև չատ մը մտիկ ընողներ կրնան ըլլալ և մենք անտյմէ մէկուն միայն ուղղելով մեր խօսքը, կ'ընանք դուն, մինչ միւս ունկնդիրները կրնան ըլլալ ան կամ անոնք (Գ. դէմք)։ Էջ 23 և 24 է մէջ քերուած խօսքերուն մէջ պնդուած սխալներ կան, բայց չեմ փափաքր պրաշարի ինչ քմահաճոյքով ուղղին խօսքին մէջ ձեռագրին պարտիզը վերածուելր է պէտք եւ

Դ.— Հոլովներու վերջաւորութեան մասին դրուած կանոնին մէջ չենք կարծեր որ չփոթեցնող պարագայ կամ խըթնութիւն գտնուի, քանի որ հոլովանիշները յայտնապէս ցոյց տրուած են կանոնին մէջ և ուսանողը արդէն ճանչցած է յօգուտը նախապէս մէջ։ Ու յետոյ՝ ուսուցիչը կրնայ բացատրել ներդրել չփոթութիւնը՝ եթէ երբեք չփոթող աշակերտներ ըլլան։ Եթէ ամէն բացատրութիւն դատապրտքը պիտի տայ, ուսուցչին պաշտօնն ինչ պիտ՝ ըլլայ։—Սև, անիկա բառերուն իրրև անձնական և իրրև ցուցական դերանուն գործածութեան պարագաներուն բացատրութիւնը նմանապէս ուսուցչին թողուած է։ Տարական դասընթացքի մէջ չէինք կրնար մանել այսպիսի մանրամասնութիւններու որոնք կրնային գտագրքին ծաւալը անհամեմատ ատելագոյնել։

Անձնական դերանուններէ առնուած իմ, իւր, մեր, ձեր, իր, իրենց են. ատացական ածականները ուղած չէինք՝ իրրև ածականներու ուրոյն դասակարգ մը, ներկայացնել առանձին դասի մէջ, և որովհետև այդ դերանուններրը ածական համարուելով հանդերձ՝ երբեք չեն դադրիր նաև իսկապէս դերանուն ըլլալէ, չատ տրամաբանական դատողութեամբ մը բաւականացած էինք անձնական դերանուններու դասին մէջ անոնց մասին դնելով ատ կանոնը. «իմ, իւր, մեր, ձեր են. սեռականները կը կոչուին նաև ատացական ածական»։ Ամատան էֆ. նախորդ քերականութիւններէն մեր այս չեղումը որ ատկայն երևութական է, բաւուն կերպով կը քննադատէ և կը կարծէ թէ ատով չփոթութեան կը մատնենք ուսանողը, ու չատ մը խօսքերէ վերջ՝ մեզի կը հարցնէ. «այս իմ, իւր, մեր, ձեր, իր են. բառերը անձնական դերանո՞ւն են թէ ատացական ածական, երկո՞ւքն ալ միանգամայն թէ միայն մէկը կամ միւսը...»։ Մենք ալ զարմանքով կը հարցնենք Ամատան էֆ. ի. «Սերկիլ

բարեկամ, ինչպէս կըլլայ որ մինչև հիմա խելք չեք ըներ չփոթութեան մեղսագրանքը նեռելու նախորդ բոլոր քերականութիւններուս տեղիտակներուն ալ երեսն ի վեր, քանի որ դըժբախտաբար անոնք ալ մեզի հետ միևնոյն մեղքը գործեր են, ո՞չ ապաքէն բոլոր քերականութիւններու մէջ ալ սա իմ, իւր, ուր, ձեր ևն. դրուած են անձնական դերանուններու հոլովմանց չարքին մէջ և յետոյ այն միևնոյն բառերն իրրև առոգական ածական ցոյց սրուած են ածականներու դասին մէջ, իրրև ածականներու ուրոյն դասակարգ մը։ Արդ եթէ այդ բառերը վերջնապէս առոգական ածական էին, ինչո՞ւ դարձ չեն վաստրեր անձնական դերանուններու հոլովմանց մէջէն, և եթէ վերջապէս դերանուն էին, ինչո՞ւ անդին իրրև առոգական ածական ցոյց սուր են . . . »։ Ապահով կրնայ ըլլալ Ամատեան էֆ. թէ նախորդ քերականութիւնները եթէ մինչև հիմա չփոթութեան չեն մատներ ուսանողը այդ բառերու պաշտօնին մասին, մեր քերականութիւնը ընո՛ւ մատնելիք չունի իր գործած չնչութիւն որ արտաբերական ըլլալէ զատ՝ կանոններու համաձայնած ըլլալու առաւելութիւնն ալ ունի, կը կարծենք։

Ե.— Ցօդի անասելոյ դիպչումներու խօսքեր ալ կ՚ընէ Ամատեան էֆ. և երեք օրինակներ մէջ կը բերէ։ Մենք այդպիսի անասելոյ դիպչումներ կատարելու սովորութիւնը չունինք, մանաւանդ թէ մեր ուսանած բոլոր կանոններուն հակառակ են անոնք։ Միայն՝ եթէ ուզենք չատ նրբախնդիր ըլլալ, ամենեն անատելատ աշխարհաբարը գրող գրագէտ մը՝ (պր. օր. նոյն ինքն Ամատեան էֆ.ի) գրուածներուն մէջ իսկ կրնանք գտնել քանի մը այսպիսի դիպչումներ որևէ ձևով սորդած, նոյն իսկ հակառակ իր կամքին։ —«Նե որև է իր» բացատրութիւնն ալ Ամատեան էֆ. հակառակ կը գանէ ներդաշնակութեան, բայց՝ սիրելի բարեկամ, բանաստեղծական քերթուած մը չէինք գրեր կոր որ այդ տաղիքան բնախնդիր ըլլայինք hiatus առաջ չբերելու և ներդաշնակութեան պայմաններ չարգելու իրենց ծայրագոյն առոգանութեան մէջ։

Զ.—«Բազադրեալ թուականն ածականներուն մէջ յօդակապ գործածելու մասին ալ ճշտութիւն չի տեսնուիր» կը գրէ Ամատեան էֆ. և մէջ կը բերէ տասն եւ մեկ (եւ յօդակապով), քսան եւ մեկ (առանց յօդակապի) և տասնի հինգ (ը յօդակապով) բառերը իրրև անփոխրինակ ձևեր։ Բայց բազադրեալ թուականները կազմութեան երկու ձև ունին, երկուքն ալ հաւասարապէս ընդունելի և գործածելի, մէկը՝ եւ յօդակապով, օրինակ՝ տասնեւհինգ, քսանեւչորս են. և միւսը՝ բոլորովին առանց յօդակապի, օրինակ՝ տասնըվեց, քսաներկու են։ Տասնըվեց և նման ձևերուն մէջ մատած ը ձայնաւորը զոր Ամատեան էֆ. յօդակապ կարծեր է, յօդակապ չէ այլ պարզ յետարան մը՝ երկու բառածայնները բախումի մեղմացնելու

համար(*) Հայերէնի մէջ ը յօդակապի մը գոյութիւնը չենք դիտեր։ Որեմն մեր պարծանքը բազդաբեր Թուականի ձևերուն մէջ անճշտութիւն մը չկայ։

Ը.— Մեր Քերականութեան տարրական դասընթացքի ձեռնարկ մ'ըլլալը անշուշտ իրաւացի պատճառը մըն էր որ հոն պակսին Ամառեան էֆ.ի չլուծած քանի մը ձևերն ու կանոնները։ Եւ սակայն պակասները միայն առանք չեն այլ սխալ ձևեր ու կանոններ ալ ունենք վերապահուած են միջին և բարձրագոյն դասընթացքներուն և զարմանք Ամառեան էֆ. կրնար իրաւունք տալ պակասները թիւն աւելցնելու համար...։ Յարգելի Մատենադաւսը նոյն իսկ կը պահանջէ որ մեր տարրական դասարաններուն մէջ բացատրէինք թէ չ ժխտական մասնիկը ի՛նչպէս և ե՛րբ չի կը փոխուի, ինչ որ պիտի հարկադրէր մեզ պզտիկ տղոց անհասկնալի բանասիրական բացատրութեանց մէջ մտնելու։ Ամառեան էֆ.ի արդարացումն այն է թէ «ուսանողը երբ ընդվզինք յանկարծ այս վերջին (չի) մասնիկին առջև կը դանէ, բացատրութիւն չի կրնար տալ»։ Մենք ալ կ'ըսենք, «եթէ ուսանողը չի կրնար տալ, ուսուցի՞չն ալ չի կրնար տալ...»։ Ամառեան էֆ. իր այս և նմանօրինակ քանի մը պնդողութիւններով կարծես ակնթարթով կ'ինթարթէ թէ մեր Քերականութիւնը առանց ուսուցչի օգնութեան՝ ինքնուսոյց աշակերտներու համար պատրաստած դասագիրք մ'ըլլար։

Ը.— Իրրև ճշգրտութեան հակառակ, կը յիշուին ինչ ինչ բառեր ու ձևեր։ Բայց Ամառեան էֆ. կրնար խորհիլ, զգօրինակ, թէ այդ յիշուածներէն կայտռիլ (փոխառեալ կայտռելի), յորդել (փոխառեալ յորդիլի), պարզ ստուգաբանական վրիպակներ են, ինչպէս որ ստուգաբանական սխալ է նաև պատանեկը (փոխառեալ պատանիկի) թէև կայ գաւառական պատնեկը (=պատանեկ), համարժէք պղտնցկներու պատանիեկին։ Կեծառ գաւառական բառը երբոյ ընդունինք, հարկ չենք տեսներ զայն հին ձևին վերապարձնել և գրել կայծառ, ինչպէս որ ամրկական երիկը չենք գրեր այսօր այրիկ։ Յորեկը՝ «կէս օր» նշանակութեամբ մենք գործածած չենք և չենք ալ գիտեր թէ Պոլսեցի ամիրեները այդ նշանակութիւնը կ'ընծայեն ցորեկին։ Սղմիլ հայոյած բառ է, պատուհասիլը անոր խմաստը չի տար և դժուար է սղմիլը փոխառեալ համարժէք բառ մը գտնել։

Թ.—Ցոդ հրահանգին ապագայ բառը ստուգաբանական սխալ է և չեմ հասկնար թէ ի՛նչպէս մեր ձեռագրին ապայն եղեր է ապագայ։ Անշուշտ մեկ Թուականին սեռականը կ'ըլլայ մեկի և մեկը անորոշ դերանունին սեռականն է որ կ'ըլլայ մեկու։ Ասիկա ճշտուած է սր-

(*) Կայ նաև ժողովրդական ձև մը ու յօդակապով, օրինակ՝ **տատուերկու, խաւնուխրեմ** ևն. որ կը հնչուին իբրև **տատվերկու, խաւնվխրեմ**, ը յետնաձայնով և ու յօդակապով ձևերը ժողովրդային լեզուի յատուկ են։

դէն հրատարակելի միջին դասընթացքին մէջ։

Ժ.— Անշուշտ ազէկ բան է համաուսատարան ըլլալ և սեղմ ու կարճ բացատրութիւններ գործածել, պայմանով սակայն որ իմաստին ճշտութիւնը չխանգարուի։ Ամառեան էֆ. մանաւանդ այսպիսի յատակախօսութեան հակառակ կը նկատէ կամ չափազանց իբր թէ անհարկի չուալեւթիւնը գործածութիւնը մեր քերականութեան մէջ։ Յարգելի ժամանակակիցին այս դիտողութիւնը անտեղի կը գտնենք ալ մենք բան մը խօսք ճիշտ և յատակախօս լինելու և քերականական կանոններուն անթերի առհմանները տալու համար է որ երբեմն պէտք տեսած ենք այդ չափազանց գործածութեան. զոր օրինակ՝ «Տէր բային ընդհանրապէս անուն մըն է կամ դերանուն մը և ոչ երբ կուտայ բային գործողութիւնը կատարող կամ վիճակը կրող անձը կամ իրը» կանոնին մէջ նթէ կամ ով չափազանց բառերը չգէնք, ո՞չ ոտքէն կանոնը իմաստ կըլլայ։ Յարձակում «առնէն գործողութիւն կամ վիճակ կա՛մ անցած ժամանակի մէջ կատարուած կ՚ըլլայ, կա՛մ ներկայի մէջ կը կատարուի կամ ապագայի մէջ պիտի կատարուի» կանոնին մէջէն ի՞նչպէս կրնանք կամ երբ ջնջել առանց խօսքին քերականական կապը եղծանելու։ «Տէր բային կամ ենթակայ» ըսելն ալ հաճելի չէ եւեր Ամառեան էֆ.ի որ կը հարցնէ թէ «ի՞նչ անհատականութիւն ունէ այդ բառերէն միայն մէկը նախադասութեան ընդարձակ»։ Ամառեան էֆ. կրնար պիտի թէ մեր նախադասութեան տարածն է տէր բային յարձորդումը և թէ մեր քերականութեան մէջ տէր բային է ամբողջ գործածուածը, մինչդեռ ենթակայ յարձորդումը միայն մէկ անգամ յիշուած է, այն ալ կանոնին մէջ, և դա այն նկատումով որ բառական ընդհանրացած ենթակայ յարձորդումն ալ պիտոյ ուսանողը և երբեմն պիտի մէջ հանդիպի այդ բառին, չմտածելի չմնայ։ Կը գտնենք թէ Ամառեան էֆ. մեր դէպքին

մէկի կը վերածուին»։ Արդ՝ վերի յիշուած բառերը ճշտիւ միևնոյն պաշտօնն ունեցող բառով լրացում կատկտով համանման քանի մը նախադասութիւններ մէկի վերածելու յատկութիւնն ունին, հետևաբար յայտնապէս չպակսիլ են, հոգ չէ՛ թէ մակբայական թեքեալ խնամսո մըն ալ բովանդակին իրենց մէջ։ Բացատրենք օրինակներով։

«Երկրի վրայ, նաև երկինքի մէջ նոյն օրէնքները կը տիրեն», փոխանակ ըսելու՝ «երկրի վրայ նոյն օրէնքը կը տիրէ, երկինքի մէջ նոյն օրէնքը կը տիրէ»։

«Փայտն ալ, ածուխն ալ [*] սուղցան այս տարի», փոխանակ ըսելու՝ «փայտը սուղցաւ այս տարի, ածուխը սուղցաւ այս տարի»։

«Ոչ միայն կեանքը պղտ նաև մահը բնական օրէնքներ են», փոխանակ ըսելու՝ «կեանքը բնական օրէնք է, մահը բնական օրէնք է»։

«Ո՛չ այնման պղինձն որման երկաթը կարևոր մետաղներ են», փոխանակ ըսելու՝ «պղինձը կարևոր մետաղ է, երկաթը ևս կարևոր մետաղ է»։

«Գարունը, նմանապէս Մայիսը, տարուան հաճելի սեզոն է», փոխանակ ըսելու՝ «Գարունը տարուան հաճելի սեզոն է, Մայիսը տարուան ևս հաճելի սեզոն է»։

«Զապէլ ամէն բանէ կը վախնայ, ևս՛յն իսկ իր չուքէն», փոխանակ ըսելու՝ «Զապէլ ամէն բանէ կը վախնայ, Զապէլ իր չուքէն կը վախնայ»։

«Բնութեան մէջ բան մը չի կորսուիր, ամենաչնչին հետքերն անգամ», փոխանակ ըսելու՝ «Բնութեան մէջ բան մը չի կորսուիր, բնութեան մէջ ամենաչնչին հետքերն չի կորսուիր»։

Այս խօսքերուն մէջ գործածուած շաղկապները հաւատարակական են, իսկ հազիւ թէ ստորադասական շաղկապ է, որովհետև տուրս դառ նախադասութիւն մը պլխաւորին հետ կը միացնէ. օրինակ, «հազիւ թէ արևը ծագեցաւ, մենք ճամբայ ելանք»։ Իսկ առանձին հազիւ մակբայ է. օրինակ, «կառախումբին հազիւ հասայ»։

Վերջացնելով մեր պատասխանը, կը կրկնենք թէ յօժարամտութեան նկատի առած ենք Ամասիան էֆ. ի մեր գերազանցութեան մասին ներկայացուցած մանրակրկիտ դիտողութիւնները և ապահով ենք թէ նոյնքան յօժարամտութեամբ պիտի կարդայ մեր վերի բացատրութիւնները։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

---

[*] Կայ նաև ալ մակբայ այլեւս նշանակութեամբ, օրինակ՝ «վշտացայ, ալ չեմ ուզեր»։

ԳԱԲԻԻԼ ՄԷՆՏԷՍԻ ՄԷԿ ՖԱՆԹԷԶԻՆ

ԹԷ. ԻՆՉՈ՞Ւ ՍԱՏԱՆԱՅԻՆ ՍԱՋԵՐԸ ԹԱՓԵՑԱՆ

Ամէն մարդ գիտէ թէ Սատանային գլուխը ճագաթ է, և իրաւամբ ալ այսպէս ըլլալ պէտք էր, վասն զի մարդկային սեռին մեծագոյն թշնամւոյն՝ տգիտութիւնից մեծագոյնն՝— այն է ճագաթութիւնը կ'վայէլ։

Բայց ամէն մարդ չգիտեր թէ ինչպէ՞ս Լուսիփէր, ըստ ոմանց Իպլիս, և ըստ այլոց Բէհղէլզեպուղ՝ որ քառ. առ քառ. նահանգու վեհապետ կ'Մարգմանուի, իր մազերը կորսնցուց։

Ես ալ չէի գիտեր, և հիմա ձեզի պատմիմ ինչ կերպով որ ինծի պատմից տափրիչ մը—մօրուքը ածիլած և մազերս յորպարած մէջոկին—և օրս խանութին նշանարանն էր. Սատանայի կեղծաւորին։

Գիտէք որ ընդհանրապէս տափրիչները չաղակրատ կ'ըլլան, և երբ իրենց ածելին և մկրատը կ'բանեցնեն, լեզուներն ալ պարապ չեն մնար։

Արդ՝ առաւօտեան լոյսին պէս գնացի, դժոխքին պէս կարմիր, մշանջենաւոր գիշերուան պէս սեւ, տպաւորիչն մազերն այնչափ խիտ և առատ էին՝ որ դժոխքը գոհավիժելէն վերջն ան, գամ՝ ընդարձակ տարածոյն մը պէս երկար և ծավալ վրայ պարզուած էին, և ամենատարին Սատանայ չատ կ'տարամէր։ Վասն զի թէպէտ իր տիրոյնները կ'գնէր, սրք երկաթ մոլորակներով չէնուած՝ և տանգին դիտուորի մը պոչով մինցած են, բայց չէր կրնար տչխարհիս մէջ անցած դարձածը տեսնել, և վարդերն տեղծելէ վերջ՝ գոնէ արձակ հոտութեամբ պէտք էր վայելել թէ՛ անոնց բոյրն և թէ տեսքը։ Ասկէ զատ Հայր Սատանայ՝ մեր ունեցած ամենէ աւագ և վաւերական պատկերներու համեմատ՝ տեսնելի վիճակ մօրուք ունի քան թէ մազ, ուստի կ'երևի թէ տանկ քիչ մ'ալ կ'նախանձէր։ Հարկաւ իրեն համար չատ դիւրին էր կայծակով մազերն այրել, ինչպէս որ ճակատը ճեղքած էր, բայց պատուոյ խնդիր կար և չէր ուզեր անգամ մը գործածած միջոցը դարձեալ գործածել։

Անանկ որ մեծ մոտատնջութեան մէջ էր, երբ Գաբրիէլ հրեշտակապետը՝ թեւերը պաշտօնեայի մը ակնածական ձևերով մօտեցնելով տապէս խօսեցաւ։

— Ինչո՞ւ տանկ ոչինչ բաներու համար աչքէդ կ'արտասիս, ո՛վ Տէր Սատանայ։ Հրաման ըրէ միայն որ տմեն տնգամ որ երկրի վրայ մարգտպատնութիւն մ'ըլլայ, Լիւսիփէր մազ մը կորսնցը-

նէ, և քանի որ կ'տեսնենք թէ մարդիկ ի՞նչ կատաղութեամբ ղե-
րեալ կ'ասպաննեն, չատ չանցնիր առաքեալին պլուխը քսան դարու
տեղատուութեամբ մաշուած ժայռի պէս ճերմակ և ոզորկ
պիտի ըլլայ։

— Ի՞նչ, հառաչեց, ամենաբարին Աստուած, միթէ կարելի է
որ իմ առեղծած արարածներս գիրեալ յօշանան։ Բայց սա միջոցը
փորձենք։ Եւ ըսաւ. «Ամէն անգամ որ երկրի վրայ մարդասպա-
նութիւն մ'ըլլայ, Մո՛ղ Լեւսիթէր իր գլխէն մազ մը կտրտնջէ»,
և հանգիստ կեցաւ երկինքի երամչաւութեանց և վտառաց մէջ։

Եւ երկրի վրայ գործուած ոճիրներէն ամէն առաքեալին մազե-
րը փետրուէր։ Որ և է դանակի, ատրճանակի, լամպի, նիզակի հար-
ուածով գլխէն մէկ մազ կ'իյնար։ Իսկ պատերազմներով, Հա-
յաստանի, Աստանի և Մակեդոնիայի ջարդերով՝ վարսերու փունջ
կ'թափէին, բայց ի՞նչ օգուտ, առաքեալին մազերը այնչափ
խիտ և աւատ էին, որ օր մը (Ապրիլ ամսոյն մէջն էր) Տէր Աստ-
ուած դէպի երկիրը դիտուելով՝ մազերու աստուածինէն չկրցաւ
երբեմնիներու առատը տեսնել, որոնց մէջ թռչուններն իրենց
բոյները կ'հաստատէին։

Այն ատեն Գաբրիէլ հրեշտակապետ մօտենալով.

— Մի՛ յուսահատի՛ր, ըսաւ, չեմ գիտեր ի՞նչ կայ որ վարը
տղոլտականէն նուազ մարդասպանութիւն կ'ըլլայ, թէպէտ և
կրնար ըսուիլ թէ Սուլթան Համիտ և իւր պաշտօնեաներն ալ աշ-
խատած են կարելի եղածին չափ չատ մարդ ջարդելու։ Հրաման
ըրէ որ ամեն անգամ երբ երկրի վրայ գողութիւն մ'ըլլայ, Լիւ-
սիթէր մազ մը կտրտնջէ, և օրական երէք տղեկ ուշադրութիւն
ընենք, մարդիկ ինչ որ ունին՝ մեռ միւսէն գողցած է, հետևաբար
չատ չանցնիր առաքեալին պլուխը՝ դիւրուկ տղիկան մը ուսին պէս
երկի պիտի ըլլայ։

— Ախ, հառաչեց ամենաբարին Աստուած, ես գժտութիւն կը
հաստատեմ թէ մարդիկ ամենքն ալ գող ըլլան։ Ինչ պէտք ունին
գողնալու քանի որ ես իրենց ընտրած եմ երկինք և կանանց գե-
ղեցկութիւնը, ծաղիկները, թռչուններն, ծովու ալիքները և գա-
լարափող անասունները՝ որոնց չեմ թոյլ տար որ կ'հանդչին։

Բայց սա միջոցն ալ փորձենք։

Եւ ըսաւ. «Ամէն անգամ որ երկրի վրայ գողութիւն մը կա-
տարուի, Լեւսիթէրի գլխէն մազ մը իյնայ», և իրեն մատուց-
ուած վատահանութենց ունկնդիր եղաւ։ Դժոխային գանկն ամ-
պին ցնցուեցաւ։ Եթէ կաժէն մը գնդիկ մը գողնար, կամ աւազա-
կութեան մը ուզեր մը կողոպտէր, եթէ Միծն Ազէքսանդր Հնդ-
կաստանը նուաճէր, կամ թէ կեսար կօլերան սիրէր, կամ թէ
Սուլթան Համիտ, Իզզէթ վաշա և ընկերք Օսմ. Պետութիւնը կո-
ղոպտէին, եթէ ոտանիկ մը հատ ընտրողին գրպանները պարպէր,

կամ քահանան մը դաւանանքի մը ժամադրյալը յափշտակէր, մազ մը, մազ մը, դարձեալ մազ մը կ'իյնար։ Սակայն դործադրութիւններով անոգին վարսեր կորսյս, Հայոց ինչքերուն թալաններէն, Երուսաղէմի Վանքին դրամներուն կողոպտուելէն չատ մազերը թափեցան։ Բայց հրաշալի մազերն այնչափ առատ էին, որ ըոլոր այս կորուստները միայն վտքրիկ հեռադիտեր թացած էին գլխուն վրայ, ինչպէս խիտ անտառի մէջ նոր արահետներ կ'գըտնուին։

Գաբրիել հրեշտակապետ մեծ մտատանջութեան մէջ ինկաւ։

— Ուրեմն, ըսաւ, կարծածիս չափ գողտրիկն չըլլա՞ր։

Ուրիչ միջոց մը մտածենք։

— Հրաման ա՛ւր որ երկրի վրայ ըսուած մէն մի անմիտ խօսքին համար Լիւսիփէր մէկ մազ կորսնցնէ։

— Է՛հ, է՛հ, ըսաւ սմենաբարին Աստուած, ալ չափը կ'անցընես։ Ինչ, կ'յուսաս որ մարդիկ այն աստիճան ապուշ են։ Ինչ և է, աս ալ փորձենք։ «Թո՛ղ Լիւսիփէր մէյ մէկ մազ կորսնցնէ երկրի վրայ գրուցուած մէն մի անմիտ խօսքին»։

Ո՛հ, բհնդղերուզի խո՛ղճ գլուխը։

Փոխարինէ գրուած խոսքի խորհուրդը այլ մազերը կ'իյնային։

Թաֆթ - ֆօնևարներու մէջ երգուած երգերով, Սալօնևարու մէջ ի տես դրուած նկարներու առիթ եղած դիտողութիւններով, վօտվիլևարով, բժիշկներու մէջտեղ կատարուած խորհրդակցութիւն. ներով, փաստաբաններուն մարդասպան մը կամ գող մը արդարացնելու համար դատավարութեան միջոցին ըրած ուսուցիկ խօսքերով, խել մը քարոզիչներու անհամ, անհոտ քարոզներով, նոր երկուկ ապաքէր առնելաօսնելու անամէջ ճառերով, երևսփոխանական ժողովներու հարցապնդումներով մազերը կ'թափէին, ու կ'թափէին, բայց անթիւ և անյագեցելի մազերը դեռ կ'դիմադրէին մարդկային անմտութեան բոլոր չանքերուն հակառակ, և միշտ ընդարձակ արևնոցի պէս կ'տարածուէին՝ մինչև անգամ սրտխուչները ծածկելով՝ ուր կ'պահուին սիրտեր ամոլները։

Բարկացաւ Գաբրիել հրեշտակապետ։

— Ամենէ խիտ միջոցները դործածենք, գոչեց։

— Հրաման ա՛ւր որ ամեն անգամ երբ Բարիզի մէջ ամուսնական անհատատարմութիւն մը տեղի ունենայ, Լիւսիփէր կլլէն մազ մը կորսնցնէ։

Ամենազարմն Աստուած որդդեցաւ այս խօսքին, Քրիստոս երեսը կախեց, Աստուածամայրն գոգնոցով երեսը դոցեց, Սուրբերն ալ դէմքերնին թիթեւնոցներով ծածկուցին։

— Իրաւ որ, Գաբրիել ապա՛ր, չատ առաջ կ'երթաս։ Ինչ, այնչափ յոռի գազափար ունի՞ս այն նորատի կանանց վրայ, զորս ամեն ճիլ թափած եմ թէ դեղանի և թէ առաքինի ընելու, մանա-

ետեղ Բարիզուհին, որ ինչպես վարդը Ցալիկներուն մէջ՝ ան ալ իսկական սեռին վարդն էր։ Հոնտեղի կիները պիտենք երջանիկ կ'ըլլան, ընտանեկան յարկին փայլն ու չնահգին ըլլալով, դիչերն՝ իրենց ամլկանց և էրիկներուն հետ խօսակցելով, և չեն համաձակիր կասկածելի տեղեր դնդերիլ։

Իրաւ է որ քիչ մը տափուռ են, ես այնպէս ուղեցի, բայց իրենց դռզար համբոյրներն՝ իրենց տաքնուէնան արդիւնք մը չեն։

— Փարձէ՛ տակաւն, ըսաւ, Գաբրիել հրեշտակապետ։

— Այո՛, պիտի փորձեմ, բայց ախալմանդդ ապացուցանիլու համար։

Եւ յարեց. «Թո՛ղ Լիւսիէը մէկ մեկ մաղ կտրանցնէ Բարիզուհիներուն մէն մի անհատաստար . . .

Խօսքը չկրցաւ լմնցնել . . . տատանային մազերն ամբողջ թափեցան։

Գ. ՆՕՐԱՄԱՆԵԱՆՑ

Մ Ի Տ Հ Ա Թ Փ Ա Շ Ա*

ԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

ԳԱԼՈՒՏ ԺՈ.

Միտհաթ փաշա ընդ. գառավարիչ Իզմիրի.— Սուլթանը կուզէ Միտհաթի դէմ զործել եւ ջարդել իր ընտանիքը.— Միտհաթ կ'ապաստանի Թրանսվաղի Հիւպատոսատարանը.— Ձերբակալումը։

